# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Գեղամավան, 026161021, 093251343, geghamavan.gegharquniq@mta.gov

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 13-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Արխիվային գործի մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, 20-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով

**ավագանին որոշում է**

1. Գեղամավան համայնքի սեփականություն համարվող՝ Գեղամավանի կոլտնտեսության, Գեղամավանի խորհտնտեսության և Գեղամավանի գյուղխորհրդի արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:

2. Համայնքի ղեկավարին՝ արխիվային փաստաթղթերը երկօրյա ժամկետում նախապատրաստել պետական արխիվ հանձնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՊԱՐԳԵՎ
2. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՇՈՏ
3. ԶԱՔԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՐԱՉԻԿ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԻԿ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Գեղամավան, 026161021, 093251343, geghamavan.gegharquniq@mta.gov

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 14-Ա

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ ՈՒՂԵՐՁ ՀՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետի դրույթներով

**ավագանին որոշում է**

1. Գեղամավան համայնքի բնակիչ Պարույր Անդրանիկի Գրիգորյանի նկատմամբ հարուցված քրեական գործով պատիժը մեղմացնելու համար ուղերձ հղել Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

2. Հաստատել սույն որոշման հավելված համարվող ուղերձի տեքստը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՊԱՐԳԵՎ
2. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՇՈՏ
3. ԶԱՔԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՐԱՉԻԿ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԻԿ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Գեղամավան, 026161021, 093251343, geghamavan.gegharquniq@mta.gov

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 15-Ա

## ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով

**ավագանին որոշում է**

1. Գեղամավան համայնքում համայնքային նշանակության ենթակառուցվածքների թերությունների հայտնաբերման և գնահատման համար ստեղծել 7 հոգուց կազմված հանձնաժողով:

2. Հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Խաչատրյան - ավագանու անդամ

անդամներ՝ Գ. Սաղաթելյան - ավագանու անդամ

Վ. Զաքարյան - ավագանու անդամ

Հ. Հովսեփյան - ավագանու անդամ

Պ. Ավագյան - ավագանու անդամ

Ա. Զաքարյան - ավագանու անդամ

Գ. Խաչատրյան - աշխատակազմի քարտուղար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՊԱՐԳԵՎ
2. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՇՈՏ
3. ԶԱՔԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՐԱՉԻԿ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԻԿ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Գեղամավան, 026161021, 093251343, geghamavan.gegharquniq@mta.gov

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 16-Ա

### ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ <<ՄԱՔՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆ>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 20-րդ ենթակետի պահանջներով

**ավագանին որոշում է**

1. ՀՀ Կառավարության կողմից մեկնարկած <<Մաքուր Հայաստան>> ծրագրի շրջանակներում Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնքի վարչական տարածքում իրականացնել սանիտարական մաքրման աշխատանքներ:

2. Համայնքի ղեկավարին՝

հատկապես ուշադրություն դարձնել միջպետական և միջհամայնքային և համայնքային նշանակության ավտոճանապարհների հարող տարածքների մաքրման, աղբակույտերի վերացման ուղղությամբ տարվող աշխատանքներին:

3. Համայնքի վարչական բյուջեից միջոցներ տրամադրել համայնքի վարչական տարածքում սանիտարական աշխատանքներ իրականացնելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՊԱՐԳԵՎ
2. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՇՈՏ
3. ԶԱՔԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՐԱՉԻԿ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԻԿ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Գեղամավան, 026161021, 093251343, geghamavan.gegharquniq@mta.gov

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 17-Ա

## ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԽՃԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի դրույթներով, հաշվի առնելով համայնքային ենթակայության ավտոճանապարհների անմխիթար վիճակը

**ավագանին որոշում է**

1. Գեղամավան համայնքի ենթակայության տակ գտնվող ավտոճանապարհների անվտանգ շահագործումը ապահովելու համար իրականացնել ճանապարհների խճապատման աշխատանքներ:

2. Համայնքի վարչական բյուջեից միջոցներ հատկացնել համայնքային ճանապարհների խճապատման աշխատանքներ իրականացնելու համար:

3. Համայնքի ղեկավարին՝

Ձեռնարկել միջոցառումներ, սույն որոշումից բխող գործառույթներ իրականացնելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՊԱՐԳԵՎ
2. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՇՈՏ
3. ԶԱՔԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՐԱՉԻԿ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԻԿ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Գեղամավան, 026161021, 093251343, geghamavan.gegharquniq@mta.gov

## Ո Ր Ո Շ Ու Մ

25 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 18-Ա

### ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԸՆԹԱՑԻԿ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի դրույթներով, հաշվի առնելով համայնքի գերեզմանատան ճանապարհի անմխիթար վիճակը

**ավագանին որոշում է**

1. Գեղամավան համայնքի գերեզմանատան ճանապարհը երթևեկելի դարձնելու և նորմալ շահագործումն ապահովելու համար իրականացնել գերեզմանատան ճանապարհի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

2. Համայնքի վարչական բյուջեից միջոցներ հատկացնել համայնքի գերեզմանատան ճանապարհի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

3. Համայնքի ղեկավարին՝

Ձեռնարկել միջոցառումներ, սույն որոշումից բխող գործառույթներ իրականացնելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՊԱՐԳԵՎ
2. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՇՈՏ
3. ԶԱՔԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՐԱՉԻԿ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԻԿ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Գեղամավան, 026161021, 093251343, geghamavan.gegharquniq@mta.gov

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ԱՊՐԻԼԻ 2017թվականի N 19-Ն

### ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 36-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 28-րդ ենթակետի, 28-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի , <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով

**ավագանին որոշում է**

1. Գեղամավան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 16-ի <<Գեղամավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 36-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Հաստիքացուցակից հանել համայնքի ղեկավարի խորհրդականի հաստիքը:

2) Հաստիքացուցակի տեխնիկական սպասարկման անձնակազմում ավելացնել օժանդակ բանվորի հաստիք:

3) Օժանդակ բանվորի պաշտոնային դրույքչափը սահմանել 134250 դրամ,

4) Համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը 355000 դրամի փոխարեն սահմանել343000 դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԳՅԱՆ ՊԱՐԳԵՎ
2. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՇՈՏ
3. ԶԱՔԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ
5. ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՐԱՉԻԿ
6. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԻԿ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**